

# Գեղարքունիքի մարզի դպրոցներում բացվում են ինժեներական լաբորատորիաներ

13.06.2016

Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկությունների միությունը, «Հանրակրթական համակարգում ինժեներական լաբորատորիաների ներդրում», ծրագրի հենքի վրա Գեղարքունիքի մարզի դպրոցներում շարունակում է հիմնել «Արմաթ», ինժեներական լաբորատորիաներ: Հունիսի 10-ին միությունը Յուրբոմ ընկերության աջակցությամբ Վարդենիկի և Մարտունու ավագ և Գեղիովիտի միջնակարգ դպրոցներում հիմնեց նոր խմբակներ: Իսկ Գավառի և Կարմիրգյուղի N 2 միջնակարգ դպրոցներում, որտեղ արդեն գործում էին ռոբոտաշինության խմբակները, դրանք համալրվեցին եռաչափ տպիչներով, թվային կառավարման CNC մեքենաներով, համակարգիչներով, սեղան-աթոռներով, ռոբոտի հավաքածուներով և այլ սարքավորումներով: «Սա շատ կարևոր ծրագիր է հանրակրթության ոլորտում, որի համար մենք շնորհակալություն ենք հայտնում նախաձեռնության հեղինակներին և այն իրականացնողներին: Ստեղծված խմբակները դպրոցականներին հնարավորություն կտան շփվել գարգանալ, խորացնել իրենց իմացությունը SS ոլորտում և առաջ գնալ ժամանակակից պահանջներին համապատասխան գիտելիքներով: Մեր երկրի համար անհրաժեշտ են նաև նման գիտելիքներով զինված սահմանապահներ և ես շատ կցանկանայի, որպեսզի ինժեներական լաբորատորիաներում գործող խմբակներում դպրոցականների ընդգրկվածությունը հնարավորինս մեծ լինի», - իր խոսքում նշեց Գեղարքունիքի մարզպետի տեղակալ Անդրանիկ Հակոբյանը: «Ինժեներական լաբորատորիաների թիվը մեր մարզի դպրոցներում աստիճանաբար ավելանում է: Իսկ դա թույլ է տալիս խոսել այն մասին, որ նրանցում գործող խմբակները մեծապես կնպաստեն դասընթացների արդյունավետ կազմակերպմանը և խթան կհանդիսանան դպրոցականների կրթության որակի բարելավմանը,- նշեց մարզպետարանի աշխատակազմի ԿՄՍ վարչության պետ Գարիկ Բաղայանը: Ըստ մասնագետների մինչև 2019 թվականը նախատեսվում է հանրապետության բոլոր դպրոցներում բացել ինժեներական լաբորատորիաներ: